ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

0010 քաղ. Երևան, Վ. Սարգսյան 5, հեռ. /ֆաքս/ 511-601

№ 18-3695/դ-13

«25» 11 2013 թ.

,,Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ,, կազմակերպության
նախագահ պարոն՝ **Ա.Սաքունցին**
2001 ՀՀ, քաղաք Վանաձոր, Տ.Մեծի պողոտա, 59 տուն

Հարգելի՛ պարոն Սաքունց,

ՀՀ հատուկ քննչական ծառայության պետին և ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված Ձեր՝ 18.11.2013թ. Ե/2013-1811/669 և Ե/2013-1811/670 թվակիր գրություններով ներկայացրած դիմումը քննարկվել է ՀՀ հատուկ քննչական ծառայությունում: Հայտնում եմ, որ հիշյալ դիմումը որպես հանցագործության մասին հաղորդում ընդունելու և դրա առթիվ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված՝ քրեական գործ հարուցելու, հարուցումը մերժելու կամ հաղորդումն ըստ ենթակայության ուղարկելու որոշում կայացնելու հիմքերը բացակայում են, քանի որ դրանում հիշատակած նույն՝ ենթադրյալ հանցագործության դեպքի մասին ՀՀ ԱԺ պատգամավոր Նիկոլ Փաշինյանի կողմից ներկայացրած հաղորդումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի կարգով ՀՀ հատուկ քննչական ծառայությունում արդեն իսկ քննարկվել է, ստուգվել է քրեական գործ հարուցելու առիթի օրինականությունն ու հիմքերի բավարար լինելը, որի արդյունքում 2013թ. նոյեմբերի 14-ին կայացվել է քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշում:

Պարզաբանման կարգով հայտնում եմ, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ անձի նկատմամբ նույն մեղադրանքով քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի չվերացված որոշումը հանդիսանում է քրեական գործի վարույթը և քրեական հետապնդումը բացառող հանգամանք, իսկ ՀՀ քրեական դատավարության 21-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քրեական հետապնդման մարմնի՝ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը:

Հարգանքով՝

Հատկապես կարևոր գործերի քննիչ,
արդարադատության երկրորդ դասի
խորհրդական՝ Ա.Թադևոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ԵԼՔ
«25» 11 2013թ.